



ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
0084 Հայաստան, Երևան, Ձոր. Անդրանիկի 1,
Հեռ. 72 00 10, Ֆաքս. 72 01 21

No. 52-1
11 « 05 » 2015թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

ՕՐՅԵԿՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ վարչական ապարատի 2015 թվականի ՔՊ համակարգի նախապատրաստման հիմնական միջոցառումների պլանի, ս/թ հունիսի 04-ին իմ ղեկավարությամբ անցկացվելու է օբյեկտային վարժանք՝ «Հրդեհի դեպքում աշխատակիցների պաշտպանության կազմակերպումը» թեմայով:
Օբյեկտային վարժանքին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Օբյեկտային վարժանքի ղեկավարման շտաբի պետ նշանակել ՔՊ շտաբի պետ Գ. Նազարյանին:
2. Վարժանքին ներգրավել՝
 - ՔՊ ղեկավար կազմը,
 - տարահանման հանձնաժողովը,
 - ՔՊ կազմավորումները,
 - վարչապարատի անձնակազմը:
3. Վարժանքի ղեկավարման շտաբի պետ Գ. Նազարյանին՝
 - ապահովել վարժանքի անցկացման փաստաթղթերի մշակումը և մինչև 21.05.2015թ. ներկայացնել իմ հաստատմանը,
 - կազմակերպել վարժանքին ներգրավված ուժերի նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի,
 - ապահովել ներգրավված ուժերի գործողությունների փոխհամագործակցությունը,
 - ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ,
 - վարժանքի անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել ինձ:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Գլխավոր տնօրեն  Ա. ԱՆԱՆՅԱՆ